## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 28-Ա

## ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 64-րդ հոդվածի 3-րդ մասով; <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով , ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001թվականի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի Գ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչ՝ Միրմանով Զաքարի Հովհաննիսյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի սեփականություն հանդիսացող, քաղքացի Միրմանով Հովհաննիսյանին պատկանող առևտրի օբյեկտին հարակից, 1-ին թողոց 28/3 հասցեում գտնվող 0.0093հա հողատարածքը (կադաստրային ծածկագիրը՝ 04-090-00009-0031) ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել Միրմանով Հովհաննիսյանին, 1մ²-810դրամ արժեքով:
2. Օտարվող հողատարածքի վճարի չափը կկազմի՝ 75.330(յոթանասունհինգ հազար երեք հարյուր երեսուն) դրամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միրմանով Հովհաննիսյանի կողմից սահմանված վճարը կատարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

20 17 թ. Հուլիսի 6
գ.Վարդանաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 29-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին" N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2010թվականի ապրիլի 26-ի "Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին " թիվ 30 որոշումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչ՝ Սրաֆիլ Ուսուբի Բաքոյանին սեփականության իրավունքով պատկանող տանը (ծածկագիր 027-012) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 1-ին փողոց 25 տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:Իսկականի հետ ճիշտ է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

20 17 թ. հուլիսի 31
գ.Վարդանաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

03 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 17

ԱՐՍԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, **կարգադրում եմ՝**

1. 2017թվականի հուլիսի 3-ից Վարդանաշենի համայնքապետարանի վարորդ՝ Արսեն Հենրիկի Անտոնյանին թույլատրել օգտվելու 2017թվականի իր հասանելիք հերթական արձակուրդից՝ 20(քսան) աշխատանքային օր տևողությամբ:

2. Արսեն Անտոնյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 1-ից:

3.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. հուլիս 03
գ.Վարդանաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

04 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 18

ԿԱՐԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի Բ/Ա Հ.Ո.Ա.Կ.-ի տնօրեն Կ.Ասատրյանի դիմումը, **կարգադրում եմ՝**

1. Վարդանաշեն համայնքի բժշկական ամբուլատորիայի՝ ՀՈԱԿ տնօրեն Կարինե Ասատրյանին 2017թվականի հուլիսի 4-ից հուլիսի 20-ը ներառյալ տրամադրել 2016 թվականի չօգտագործած արձակուրդը՝ 12 աշխատանքային օր տևողությամբ:

2. Կ. Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի հուլիսի 21-ից:

3.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. հուլիս 04
գ.Վարդանաշեն